ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 200 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան, Դավիթաշեն Ի-ին թաղ.

Հեռ. 36 90 36
E-mail: azgaldyan_200@mail.ru

հ.57
02.12.2024թ.

Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Ձ
Տնօրեն Արմեն Սանթուրյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոց ՊՈԱԿ-ի և Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Ձ-ի միջև 2024 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված է հ. Ե200ՀԴ-ԳՀԱՇՁԲ-24/01 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Ծավալաթերթ-Նախահաշվով նախատեսված Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոցի 3-րդ հարկի դասասենյակների ընթացիկ վերանորոգման N 32, N 33, N 34, N 35, N 38, N 39, N 40 աշխատանքները, համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածի օրացուցային գրաֆիկով նախատեսված պահանջների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք,

կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու՝ իր պատրականությունը»:

Պայմանագրի 3 կետի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Կապալային աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը սահմանող թիվ 2 Հավելվածով սահմանվում է, որ «21 օրացուցային օրում աշխատանքներն իրականացնել ծավալաթերթ-նախահաշվով ներկայացված ողջ ծավալով», ինչպես նաև Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Ձ-ն գրությամբ դիմել է Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենին, որպեսզի համաձայնագրով ևս 21 օրացուցային օր երկարաձգել աշխատանքների կատարումը, սակայն կրկին ժամկետներում չի իրականացվել աշխատանքների կատարումը:

Տեղեկացնում ենք, որ Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Ձ-ն պայմանագրով նախատեսված է իր պարտավորությունները չի կատարել, այն է խախտել է պայմանագրով նախատեսված ժամկետներում կատարել հ 1 Հավելվածով սահմանված Ծավալաթերթ-Նախահաշվով նախատեսված Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոցի 3-րդ հարկի դասասենյակների ընթացիկ վերանորոգման N 32, N 33, N 34, N 35, N 38, N 39, N 40 աշխատանքները, մինչդեռ պայմանագրի 3.4.1 կետի համաձայն Կապալառուն պարտավոր է աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Զ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի (ամբողջությամբ) լուծում է պայմանագիրը:

Պպատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցելու) հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- Սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման համար սահմանված գումարները՝ համապատասխանաբար՝ որակավորման ապահովման գումարը կազմում է 493230 /չորս հարյուր ինսուներեք հազար երկուհարյուր երեսուն/ ՀՀ դրամ, պայմանագրի ապահովումը 328820 /երեք հարյուր քսանութ հազար ութ հարյուր քսան/ ՀՀ դրամ Պատվիրատուի 900018003625 հաշվեհամարին, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին:
- Մասնակցի կամ պայմանգիրը կնքված անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառում ցուցակում:

Տնօրենի Ժ/պ Ա. Կոստանդյան